

Հ. Ա. Խ. Հ.

ՔԱՂԱՔԱՅԻ ԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԵՆՍԳՈՐԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(Ակտած 1928 թ. Հոկտեմբերի 3-ից մինչև 1936 թ. Մայիսի 15-ը)

Հրատարակություն ՀՅԱՀ Արդյուղկումագի

Յերեվան 1936 թ.

14 FEB 2018

Հ. Ա. Խ. 4.

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԵՆՍԳՐԲԻ ՓԼՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

(Սկզան 1928 թ. Հոկտեմբերի 3-ից մինչև 1936 թ. Մարտի 15-ը)



Հրատարակություն ՀՍԽՀ Արդյունաբար

Յերեվան 1936 թ.

ՀՍԽՀ ՔԱՂԱՔԻ ՑԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՄԴՐՔԻ ՓՈՉՈ-
ԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԵՑՈՒՄՆԵՐԸ, Վ.ՕՐՈՆ.Ք ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ
1928 Թ. ՀԱԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵՎ 1936 Թ. ՄԱՐՏԻ 15-Ը

1. Ներքոնշյալ հոդվածները վերացված են

Քաղ. Դատ. Ար. Հոդվածները	ՀՍԽՀ ԿԳԿ և ԺԿԽ յիւր բնունված վարոշումով և վերացված	ՀՍԽՀ Որենք, և կարգ. ժողովածուհ վար համարում և վոր հոդվածի տակ և զետեղված. (1-ին թվերը ցույց են տալիս «Որ, և կարգ. ժող., Ա-ը, իսկ 2-րդ թվերը հոդվածը»)
1) 21 հոդվածի 2-րդ ծառ- նոթությունը (պնդուն- ված և յեղել դիկ և ԺԿԽ կողմից 1931 թ. ապրիլի 27-ի վորո- շումով).	1935 թ. 23/9	9—87, 1935 թ.
2) 36 հոդվածի ծառո- թյունը	1935 թ. 3/11	11—105, 1935 թ.
3) 40 հոդվածը	1935 թ. 3/11	11—105, 1935 թ.
4) 41 հոդվածը	1935 թ. 3/11	11—105, 1935 թ.
5) 194—195 հոդվ.	1935 թ. 23/9	9—87, 1935 թ.
6) 204—209 հոդվ.	1935 թ. 23/9	9—87, 1935 թ.
7) 210—219 հոդվ.	1935 թ. 23/9	10—127, 1929 թ.
8) 220—225 հոդվ.	1935 թ. 23/9	9—87, 1935 թ.
9) 234 հոդվ.	1931 թ. 9/1	1—15, 1931 թ.
10) 300-ա հոդվ.	1935 թ. 3/11	11—105, 1935 թ.
11) 300-բ հոդվ.	1935 թ. 3/11	11—105, 1935 թ.



11-290819N

2. ՆԵՐՔՈՇԽԵՑԱԼ. ՀՐԴՎԵՃՄԵՐԸ ՓԲՓԹԽՎԱՃ ԵՆ ՅԵՎ
ՇԱԲԱԴԻՎԱՃ ԵՆ ՀԵՑԵՎԱՅԱԼ. ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՅՐ

ՀՐԴ. 21.

Ժողովրդական դատարանի իրավասության են վերաբերում
քաղաքացիական փոխարարերություններից բղխող բոլոր գործերը,
բացառությամբ 23-րդ հոդվածում նախատեսնված գործերից.

ա) այն վեճերը, վորոնցում մասնակցող մեկ կամ յերկու
կողմերը հանդիսանում են մասնավոր անձնաքա.

բ) հանրայնացված հատվածի հիմնարկությունների, ձեռնար-
կությունների և կազմակերպությունների միջեվ տեղի ունեցող
վեճերը, վորոնք ծագում են կոլտնտեսությունների միջեվ և կու-
տնտեսությունների ու պետական կոռպերատիվ կազմակերպու-
թյունների միջեվ, յերբ հայցի գումարը 5000 ռուբլուց ավելի չե.

Կոմունալ սպասարկումներից ոգավելու պայմանագրից բղխող
հայցերը, անկախ հայցագնից:

Յերկաթուղային, ջրային և ողային փոխագրությունների
պայմանագրերից բղխող վեճերը մինչեւ 10.000 ռուբ. գումարի
հայցով, բացի մասսայական պլանային փոխադրությունների մա-
սին գլխավոր պայմանագրերին վերաբերող վեճերից:

Բոլոր մնացած գույքային իրավահարաբերություններից
բղխող լեճերը, մինչեւ 1000 ռուբլի գումարի հայցով:

գ) աշխատանքի որենքի կիրառման կալուցությամբ աշխա-
տանքային հարաբերություններից, կողեկալիվ և աշխատանքային
պայմանագրերից, ներքին կարգադրանական կանոններից, տաւժա-
ցուցակից բղխող վեճերը այն գեպում՝

1. Յերբ կոնֆլիկտը գնահատու կոնֆլիկտային հանձնա-
ժողովների քննությանը յենթակա չե:

2. Յերբ գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովին ուղարկ-
ած կոնֆլիկտները այնտեղ իրենց լուծումը չեն ստացել:

3. Յերբ զնահատու կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումը հսկող որդանների կողմից վերացված է.

դ) հանրայնացված հատվածի հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների, կոնցեսիոն ձեռնարկությունների և ոտարյերկրյա ֆիրմաների հետ ունեցած վեճերը մինչև 10.000 ռուբլի գումարի.

ե) այն փաստաթղթերի վրա հիմնված հայցերը, զորոնցով բռնագանձումը կարող ե կատարվել նոտարական գրասենյակի կամ նոտարական՝ զործողություններ կատարող զորեվի այլ որպանի կատարողական մակագրությամբ այն գեպքերում, յերբ որենքով սահմանված ժամկետը լրանալու հետեւանքով զործը քննության յենթակա յէ ընդհանուր դատական կարգով, անկախ հայցագնդից,

ΣΟΤ. 22

Բոլոր քաղաքացիական գործերը, բացի ներքոհիշյաներից, քննում ե դատարանը՝ ժողովագորի նախազահությամբ և յերկու ժողովրդական առենակաների կազմով:

Հետեւյալ գործերը քննում են ժողովատավորները միանձնաբար.
ա) բնակարանային վարձի, կոմունալ սպասարկումների վարձի բռնագանձման և վոչ բնակելի շենքերն ոգտագործելու հայցերի վերաբերյալ գործերը, յեթե վեճը կտպված չե վճարման կազմակերպությունների չափերը սահմանելու հետ.

բ) համբայնացված հատվածի հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների միջեւ ծագած վեճերի վերաբերյալ գործերը (հոդ. 21, կետ «Բ»).

գ) այս փաստաթղթերի վրա հիմնված հայցերը, վորոնցով քանագանձումը կարող է կատարվել նոտարական գրասենյակի, կամ նոտարական գործողություններ կատարող վորեկի այլ որդանի կատարողական մակագրությամբ այն գեղքերում, յերբ որենք սահմանված ժամկետը լրանալու հետեվանքով, գործը քննության յենթակա յե ընդհանուր դատական կարգով, անկախ հայցագնից (հոդ. 21 կետ, «ե»).

գ) հատուկ վարույթի գործերը, բացառությամբ 26-րդ գլուխում նախատեսնված գործերից:

Դատարանի բոլոր վորոշումները գործի նախապատրաստման ժամանակ, վարույթը դատարանում և վճիռների իրազործումը կայացնում ե ժողովը դական դատավարը միահնձնաբար, բացի այն վորոշումներից, վորոնք կայացվում են գործը լսելու ժամանակ և ընդգում են այս հոդվածի 1-ի հատվածի համաձայն՝ ատենակալների կողմէ առաջարկութիւնը կատարելու ժամանակ և այլ դատարանական ժամանակներում:

ըի մասնակցությամբ, այլև վճիռների կատարման հետաձգելին ու միքանին նվազների բաժաննելը (հոդ. 182), վորոնք կայացնում եւ դատարանը՝ ժողովրդական դատավորի և յերկու առենակալների կաղմամբ:

Յեթե ժողոատավորի կողմէց գործը միանձնաբար քննելու ժամանակ այնպիսի վեճ է ծագում, վորը յենթակա չե ժողոատավորի միանձնյա քննության, գործը հանձնվում է ժողոատարանին ի քննություն՝ ժողոատավորի և յերկու առենակայների կազմով:

407. 23

ՀՍԽՀ Գերագույն Դատարանը ըննում է

ա) հանրայնացված հատվածի հիմնարկությունների, ձեռնար-
թյունների և կազմակերպությունների միջեվ ծագած վեճերը,
ըստք բղխում են՝

1. Պետքանիկ գործառնություններից, յիթե վեճի մեջ Պետքանիկ կողմերից մեկն և, և յիթե հայցի գումարը 1000 ռուբ. ավելի յէ:

2. Յերկաթուղային, ջրային և ողային փոխազրությունների պայմանագրերից, վորոնց գումարը 10.000 ռուբլուց ավելի յէ, բայց մասսայական պլանային փոխազրությունների մասին զիմավոր պայմանագրերին վերաբերող վեճերից.

բ) հանրայնացված հատվածի հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների և կոնցեսիոն ձեռնարկությունների ու ոտարյերկրյա ֆիրմաների հետ ունեցած վեճերը, վորոնց հայցագինը 10.000 ռուբլուց բարձր ե.

Մանօքության, - Գերազույն դատարանը կարող է յաւրաքանչյուր գա-
տարանից վերցնել ցանկացած գործը և ընդունել իր վա-
րույթում, այլ և, նկատի ունենալով կողմերի գանգելու տե-
ղը և այլ հանգամանքներ, առանձին գործերը կամ մի
շարք գործեր քննելու համար հանձնել ցանկացած ժող-
դատարանին:

JULY, 24

Արբիտրաժյին կարգով ըննվող վեճերը, վորոնք ծագում են արտաքին առեվտրի գործարքներից, մասնավորապես ռատարերկյա ֆիրմաների և խորհրդային տնտեսական կազմակերպությունների միջնվ ծագած վեճերը քննվում են Համամիութենական Առեվտրական Պալատին կից Արտաքին Առեվտրի Արբիտրաժ Հանձնաժողովի կողմից՝ նրա մասին հատուկ կանոնադրության հիման վրա (1935 թ. 29/9, Որ. և Կար. ժող. № 9, հոդ. 87):

ՀՈԴ. 25.

Հայցերը ներկայացվում են այդ դատարանին, վորի շրջանում դատակիրը մշտապես ապրում է կամ մշտապես զբաղմունք ունի (1929 թ. 23/10, Որ. և Կարգ. ժող. № 10, հոդ. 162).

Մանուրություն.-1. 25-րդ հոդ. ապրուստի միջոցների՝ (ալիմենտների) և մանվամբ, խեղանդամությամբ և մարմնական այլ ֆասովածքներով պատճառած վասների հատուցման հայցերը կարող են ներկայացվել հայցատիրոջ բնակության վայրում: (1935 թ. 23/9, Որ. և Կարգ. ժող. № 9, հոդ. 87).

Մանուրություն. Նավերի ընդհարումից առաջացած վնասների հատուցման վերաբերյալ հայցերը կարող են հարուցվել նաև այն նավի գտնված վայրում, զորի վրա ընկնում և ընդհարումից առաջացած վասների հատուցման պատասխանատվաթյունը, կամ այն նավահանգստի գտնված վայրում, զորի շրջանում ցուցակագրված և հիշյալ նավը (1929 թ. 23/10 Որ. և Կարգ. ժող. № 10, հոդ. № 162).

ՀՈԴ. 34

Գործը վարելու դատական ծախքերը կազմում են պետական սիամական տուրքը և դատավարության ծախքերը:

Մանուրություն. Տուրք վճարողները բաժտությունը են 3 կարգի՝

ա) առաջին կարգի՝ պետական հիմնարկները, հանրայինացած սեկտորի հասարակական կազմակերպություններն ու ձեռնարկությունները,

բ) յերկրորդ կարգի՝ բանվորները, ծառայողները և նրանց հավասարեցված անձիք, կոլտնտեսականները, աշխատավոր մենատնտես գյուղացիները, տնայնազարձները և արհեստագործները, վարոնք աշխատում են առանց վարձու աշխատանքի կրթաման, այլև վերոհիշյալ անձանց ինամբի տակ ապրող նրանց ընտանիքի անդամները,

գ) յերրորդ կարգի՝ այլ անձիք ու ձեռնարկությունները.

ՀՈԴ. 35.

Յուրաքանչյուր սկզբնական հակընդդեմ հայցերից, այլև ինքնուրույն հայցապահանջով յերրորդ անձնափորությունների կողմից գործին մասնակցելիս գանձվում է պետական միասնական տուրք:

Առաջին կարգի վճարողներից (34 հոդ. ծանոթութ. «ա» կետ) տուրք գանձվում է պետական և տեղական բյուջեյում գանվող հիմնարկություններից ու ձեռնարկություններից, այլև անտեսական հաշվարկման հիմունքներով գործող բնակելի վայրերի առողջա-

պահական ու բարեկարգմանը սպասարկով՝ հասարակական ովտաւ գործման ձեռնարկություններից (կոյուղի, ասսենիզացիա, ջրամատակարարում, լուսավորություն, ախտահանման կամերա և այլն), զորոնք շահագործվում են կոմունայ տնտեսական մարմինների կողմից, առանց վարձակալության տրվելու, ինչպես և համամիութենական պրոֆեսիոնալ միությունների կենտրոնական վարչության և նրան միավորող պրոֆեմիություններից հետեւյալ չափերով, մինչեւ 25 ոուր. գնահատված հայցից-1ու.՝ յուրաքանչյուր դիմումից, 25 ո. ավել և մինչեւ 50 ոուրի գնահատված հայցից 2 ոուր., 50 ոուր. ավելի և մինչեւ 100 ոուր. գնահատված հայցից 3 ոուր., 100 ոուր. ավելի և մինչեւ 250 ոուր.-5 ոուր.՝ յուրաքանչյուր դիմումից, 250 ո. ավելի և մինչեւ 500 ոուր. գնահատված հայցից՝ հայցագնի 2 տոկոսուր:

բ) հանրայնացված սեկտորի այլ ձեռնարկություններից, հիմնարկություններից և կազմակերպություններից (քացի կոլտնտեսություններից) հետեւյալ չափերով.- մինչեւ 200 ոուր գնահատված հայցից- նախընթաց կետում նշված կոպարներով, 200 ոուր. ավելի մինչեւ 500 ոուր. գնահատված հայցից 5% հայցագնի, 500-ոուր. ավելի գնահատված հայցից՝ 6% հայցագնից:

գ) կոլտնտեսությունների միմյանց հետ և կոլտնտեսությունների պետական և կոպերատիվ կազմակերպությունների հետունեցած վեճերի վերաբերյալ հայցադիմումներից-հայցագնի $\frac{1}{4}\%$ -ի չափով:

Յերկրորդ կարգի վճարողներից (34 հոդ. ծանոթ. «բ» կետ) տուրք գանձվում է հետեւյալ չափերով.- մինչեւ 25 ոուր. գնահատված հայցագնից 1 ոուր.՝ յուրաքանչյուր դիմումի համար, 25 ոուր. ավելի և մինչեւ 50 ոուր. գնահատված հայցից 2 ոուր., 50 ոուր. ավելի և մինչեւ 100 ոուր. գնահատված հայցից 3 ոուր., 100 ոուր. և մինչեւ 150 ոուր գնահատված հայցից 5 ոուր., 150 ոուր. ավելի և մինչեւ 200 ոուր.- գնահատված հայցից 10 ոուր., 200 ոուր. ավելի գնահատված հայցից՝ 7% հայցագնից:

Յերրորդ կարգի վճարողներից (34-րդ հոդ ծանոթ. «գ» կետ) տուրքգանձվում է մինչեւ 25 ոուր. գնահատված հայցից՝ 2 ոուր. յուրաքանչյուր դիմումից, 25 ոուր. ավելի և մինչեւ 50 ոուր. զընահատված հայցից՝ 3 ոուր., 50 ոուր. ավելի և մինչեւ 100 ոուր. զնահատված հայցից՝ 5 ոուր., 100 ոուր. ավելի և մինչեւ 150 ոուր. գնահատված հայցից՝ 10 ոուր., 150 ոուր. ավելի և մինչեւ 200 ոուր. գնահատված հայցից՝ 15 ոուր.՝ յուրաքանչյուր դիմումից, 200 ոուր. ավելի գնահատված հայցից՝ 8% հայցագնից: Ստաց-

փածային բնույթի չունեցող կործերից և հասուն վարույթի կործերից յերկորդ կարգի վճարողներից տուրքը գանձվում է 3 ո., յերրորդ կարգի վճարողներից ն ոռոք. չափով՝ յուրաքանչյուր հայցագիմումից:

Առաջին կարգի վճարողներից այդպիսուն գործերի համար տուրք չի գանձվում: Դատական վճի դեմ յուրաքանչյուր վճարեկ գանձալից տուրք գանձվում է նշված կոպարների կես տոկոսի չափով, հիմք ընդունելով գանդատարեկված գումարի չառը:

ՀՈԴ. 36.

Հայցագինը վորոշում ե՝

ա) դրամական դումարներ պահանջելու և գույքի վերաբերյալ հայցերի մեջ ըստ պահանջվող դումարի կամ պահանջվող գույքի արժեքի, վորը սկզբից վորոշում և հայցվորը:

բ) մի քանի ինքնուրույն հայցերից բաղկացած հայցերի մեջ ըստ բոլոր պահանջների ընդհանուր գումարի.

գ) ժամկետային հատուցումների և վճարների վերաբերյալ հայցերի մեջ՝ ըստ բոլոր վճարումների ու հատուցումների ընդհանուր գումարի.

դ) չքավոր և անաշխատունակ ամուսիններին, ծնողներին և զավակներին ապրուստի միջոց տալու վերաբերյալ հայցերում մի տարվա համար վճարվող գումարից, անվորոշ ժամանակով և ցման աըրվող վճարումների ու հատուցումների վերաբերյալ հայցերում — 3 տարվա վճարումներից.

ե) վարձակալական պայմանագրերի ուժը կարճացնելու կամ յերկարելու վերաբերյալ հայցերի մեջ պայմանագրի մնացած ժամանակի հասանելիք վարձագրամի գումարի համեմատ:

ՀՈԴ. 38.

Այն հայցերի վերաբերմամբ, վորոնց գնահատությունը դժվար է լինում վորոշել հայց հարուցելիս, դատական տուրքի չափը նախապես վորոշում ե դատարանը, բայց այն 10 սուբլուց պակաս լինել չի կարող. տուրքի պակասը գանձվում է հետո՝ հայցագնի համեմատ, վորը դատարանը վորոշում է գործը վճռելիս:

ՀՈԴ. 42.

Դատարան կանչված վկաների աշխատավարձը պահպանվում է: Բանվորների կամ ծառայողների թվին պատկանող վկան կործից կարգելու համար վարձատրություն սատնալու համար, այդ

ժաման պիտի հայտնի դատարանին, հարցաքննությունից հետո Այդ գեղում վարձատրության չափը վորոշում և դատարանը, վորը չի կարող գերազանցել տվյալ վայրի միջին աշխատավարձից: Վորպես վկան դատարան կանչված բանվորներն ու ծառայողներն երավունք ունեն իրենց լրիվ աշխատավարձը ստանալու իրենց ծառայության կամ աշխատանքի վայրից: Յեթե վկան տվյալ դատարանի շրջանից դուրս ե ապրում, նրան հատուցվում է ձանապարհածածութեք:

ՀՈԴ. 43.

Դատական տուրք և գործի վարույթի վերաբերյալ ծափքեր չեն գանձվում. —

ա) աշխատավոր հայցվորից՝ աշխատավարձ գանձելու և այլ պահանջների վերաբերյալ, վորոնք բղխում են աշխատանքային հարաբերություններից.

բ) այն հայցվորներից, վորոնք պատկանում են ժամկետային ծառայության կաղըային, շարքային և կրտսեր պետկազմին, (այդ թվում նայել սահմանապահ զորքերը և ՆԳԺԿ ներքին պահպանությունը), բանվորազյուղացիական միլիցիայի շարքային և կրտսեր պետկազմի աշխատողները, ուղղիչ աշխատանքային հիմնարկների և ուղղականացված պահպանության, այլև նախկին կարմիր պարտիզանների և գվարդիականների շարքին:

գ) ապրուստի միջոց (ալիմենտ) գանձելու համար, իւեզում կամ մարմնական այլ վիավածքներ պատճառելու վերաբերյալ հատուցումներ պահանջող հայցվորներից:

դ) արհեստակցական կոռպերացիայի ցանցի մեջ մտնող արտադրական ընկերությունների (արտել) անդամ՝ հայցվորից, ընդհանուր արհեստանոցում աշխատելու համար վարձատրության զանձումների վերաբերյալ հայցերից.

ե) հեղինակի իրավունքից և գյուտարարության իրավունքից բղխող վարձատրության վերաբերյալ հայց ներկայացողներից.

զ) այն աշխատավորներից, վորոնց ժողովրդական դատավորը կամ գործը քննող դատարանը տուրք վճարելու բավարար միջոցներ չունեցող են ճանաչել:

ը) այն հայցվորներից, վորոնք ԱՄՖԽՀ և ՀՍԽՀ ֆինժողկումատների վորոշումներով ազատված են պետական միասնական տուրք վճարելուց.

Տեղական զննության հետ կապված փորձագետների ու վկաների ճանապարհածախը և արված ծախքերը հասուցելու անհրաժեշտ գումարը առաջուց վճարում է այն կողմը, փորը խնդրել է վկաներ կամ փորձագետ հրավիրել կամ տեղական զննություն կատարել, Յեթե դատակոչը կամ զննության վայրն ուղեկորվելը տեսիր յեւ ունենում դատարանի նախաձեռնությամբ, այդ դեպքում փողն առաջուց վճարում են յերկու կողմերը:

Վորպիս վկա դատարան հրավիրված բանվորներին ու ծառայողներին վարձատրելու համար փողը դանձվում է շահագրգոված կողմից՝ տվյալ վայրի միջին աշխատավաւձի համապատասխան չափով: Այդ գումարն անմիջապես դարձվում է պետական յեկամուտ:

Կետական միասնական տուրքը և գործի վերաբերյալ մյուս ըուրը ծախքերը, փոր կրել և հայց հարուցող կողմը, կամ յեթե այդպիսին կրելուց այդ կողմը ազատված է 43 հոդ. հիման վրա, դատարանի վճռով բավարարված հայցերի համեմատական չափով վրձարում է պատասխանողը, յեթե 43 հոդվ. հիման վրա այդպիսիք վճարելուց նա ազատված չե: Պատասխանող կողմը նույնութեա իրավունք ունի կրած ծախքերի հատուցումը պահանջելու հայցի՝ դատարանի կողմից մերժված մասի համեմատական չափով:

Նախորուրուն. — 1. Բացի պետական միասնական տուրք մուծելուց, գործը տարած կողմը իրավունք ունի պահանջելու իր փոխանորդին վարձատրելու համար արած ծախքերի հատուցումը, յեթե փոխանորդը գործին մասնակցել է հայցի այն մասի 5 % ի չափով, փորի նկատմամբ կողմի ողտին վճիռ և կայացվում:

2. Անրարեխիթ կերպով անհիմն հայց, կամ հայցի գեմ կամ գործի արագ ու կանոնասովը լուծում ստանալու դեռ սիստեմատիկաբար խոչընդուներ հարուցող կողմին, դատարանը կարող է, միջին աշխատավարձի համապատասխան, պարտավորեցնել վարձատրելու մրու կողմին, ի հատուցումն նրա փաստորեն կորցրած աշխատանքի ժողովակի: Փոխանտուցման այդ գումարը պիտի համարվածանի միջին աշխատավարձի չափին, սակայն չպիտի գերազանցիք վճառ կամ մերժած հայցամասի 5 % ի չափով կամ մերժած հայցամասի 5 % ի չափով: Այդ փոխանտուցման նախածախը կարող է վճառվել յեկամուտի համար, փորի ողտին ամրողջութիւն կամ մասնակի կերպով վճիռ և կայացվում, անկախ դատական ծախքերի հատուցման հայցը լուծելուց (1935 թ. 9/ 11 ՈՐ. և Կարգ. Ժոդ. հոդ. 105).

54 Հոդվածից հանված եւ «շաբաթներով» խսորը: (1930 թ. 4/ 10, ՈՐ. և Կարգ. Ժոդ. № 12, հոդ. 213):

54 Հոդվածից հանված են հետեւյալ բառերը՝ «յեթե ժամանակամիջոցը հաշվվում եւ շաբաթներով, ապա նա լրանում է վերջին շաբաթի համապատասխան որը» (1930 թ. 4/10 ՈՐ. և Կարգ. Ժոդ. № 12, հոդ. 213):

Յեթե որենքով կամ պայմանագրով սահմանված ժամկետը լրանում է հետեւյալ հեղափոխական որերին՝ Նոյեմբերի 7-ին և 8-ին, հունվարի 22-ին, մայիսի 1-ին և 2-ին, ապա ժամկետի վերջին որ եւ համարվում այդ որերին հաջորդող առաջին որը:

Այն հիմնարկները, ձեռնարկություններն ու կազմակերպությունները, փորոնք չեն անցել անընդատ արտադրական շաբաթի, ինչպես նայել առանձին քաղաքացիները կարող են իրենց պարտականությունները կատարել կամ իրենց իրավունքն ոգտագործել որենքով կամ պայմանով սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքի որն այն գելքում, յերբ ժամկետը լրանում է ԱՄֆիլէ և ՀՍԽՀ որենսդրությամբ սահմանված հեղափոխական որերին, հանգստի հատուկ որերին և շաբաթական հանգստի որերին:

Նախորուրուն. — Այս հոդվածի կանոնները կիրառվում են հիշյալ հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների նկատմամբ այն սպայմանով, յեթե նրանք տեղիկանք հերկայացնեն, վոր գեռ չեն անցել անընդատ շաբաթի:

Տեղեկանքը ստորագրվում է տվյալ հիմնարկի, ձեռնարկության կամ կազմակերպության սպատասխանառ գերավարի կողմից (ՈՐ. և Կարգ. Ժոդ. 1930 թ. № 12, հոդ. 211):

Գործի դատաքննությունը կատարվում է գոնքաց և բերանացի: Ազգային փոքրամասնության շրջաններում դատաքննությունը անպայման կատարվում է տեղական բնակչության մեծամասնության լեղվով (1932 թ. 13/5, ՈՐ. և Կարգ. Ժոդ. № 2, հոդ. 49):

Այն անձինք, վորոնք հիմք ունեն վախենալու, թե իրենց համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը հետազայռմ անկարելի յէ, կամ խիստ դժվար կլինի, կարող են խնդրել ժողովը դաշտավորից՝ միանձնաբար ապահովել այդ ապացույցները:

Յեթե դեռ չի հարուցված այն հարցը, վորի համար այդ ապացույցները կարող են կարեվոր լինել, ապացույցների ապահովումը կատարվում է ժողովրդական դաշտավորի կողմից միանձնաբար, առանց կողմերին հրավիրելու:

Ժողովրդական դաշտավորը ապացույցների ապահովությունը թույլ տալու մասին վորոշում կայացնելիս ցույց է տալիս նրա մեջ ապահովման կարգն ու յեղանակը:

Ժողովրդական դաշտավորի՝ ապացույցների ապահովումը թույլ տալու դեմ չի կարելի մասնավոր գանգատ տալ:

Գործը քննող դաշտարանի գործունեյության շրջանից դուրս մշտական բնակություն ունեցող վկաներին հարցաքննում և նրանց բնակության շրջանի ժողովրդական դաշտավորը միանձնաբար, իսկ յեթե նրանք ներկայանան գործը քննող դաշտարանին, թույլատրվում է նրանց այնտեղ հարցաքննել:

Վճիռ կայացնող դաշտարանի դաշտավորը՝ կորցրած կատարողական թերթի իսկականի փոխարեն կարող է միանձնաբար տալ կրկնակը, կրկնակը տալու վերաբերյալ խնդիրքը քննում է կողմերին կանչելով: (1932 թ. 9/3, Ռ. և Կարգ. Փող., № 12—13, հոդ. 13):

Այն անձինք, վորոնք ցանկանում են պարտազիր զինվորական ծառայության որենքի հիման վրա (ԽՍՀՄ կդկ և Ժկի 1928 թ. ոգոստոսի 8-ի վորոշումը, — Ռ. և Կարգ. Փող. 1928 թ. № 52, հոդ. 449), միջնորդություն հարուցել իրենց զինվորական ծառայությաւնից կրոնական համոզումքների պատճառով ազատելու մասին, զիմում են տալիս ժողովրդական դաշտարանին: Այդ գործերը լովում են խնդրատուին կանչելով և անպայման դաշտախազության

ներկայացուցչի մասնակցությամբ: (1930 թ. 7/1, Ռ. և Կարգ. Փող., № 1, հոդ. 18):

Նոտարների կատարած գործողությունների դեմ գանգատները տրվում են շրջանի ժողովատարանին: Վերջինն ընդհանուր կարգով ըստ եյության ըննության և առնում գործը, կասեցնելով նոտարական մակազրության կատարումը հայցի ապահովման կարգով: Գործողությունը կատարելուց հրաժարվելու, նաև գործը ձգձգելու դեպքում գանգատները տրվում են Գերազույն դաշտարականին:

«ՄԵԼ շաբաթ» բառերը փոխարինված ե բառերով «յոթ որ» (1930 թ. 4/10, Ռ. և Կարգ. Փող., № 12, հոդ. 213):

Գանգատը ներկայացվում է այն նոտարեն, վորի գործողությունների դեմ գանգատ և տրվում, նոտարը՝ գործի եյության վերաբերյալ իր բացատրության և իսկական գործի կամ անհրաժեշտ փաստաթղթերի պատճեների հետ միասին գանգատը յերեք որվա ընթացքում ուղարկում է ըստ պականելույն՝ ժողովատարանին կամ Գերազույն դաշտարանին: (1931 թ. 9/1, Ռ. և Կարգ. Փող., № 1, հոդ. 15):

«ՄԵԼ շաբաթ» բառերը փոխարինված ե բառերով «յոթ որ», իսկ «յերկու շաբաթ» բառերը փոխարինված ե «տասնչորս որ» բառերով: (1930 թ. 4/10, Ռ. և Կարգ. Փող., № 12, հոդ. 213):

«ՄԵԼ շաբաթվա» բառերը փոխարինված են «յոթ որվա» բառերով: (1930 թ. 4/10, Ռ. և Կարգ. Փող., № 12, հոդ. 213):

Նոր յերեվան յեկած հանգամանքների հետեւանքով որինական ուժի մեջ մտած դաշտական վճիռները նորից վերաբննելու մասին հարց հարուցելու իրավունքը, նկատի ունենալով նոր յերեվան յե-

կամ հանգամանքների բնույթը, պատկանում է կամ այն դատարանին, վործ գործը քննել ե ըստ եյության, կամ Գերագույն դատարանին:

ՀՈԴ. 252

Նոր յերեվան յեկած հանգամանքների հետեվանքով վճիռների վերաբննության մասին հարց կարող ե հարուցել թե դատավարությանը մասնակցող կողմերի խնդրով և թե Արդժողովի, Հանրապետական դատախազի և նրա տեղակալի, Գերագույն դատարանի նախագահի, կամ հռոմալատասխան շրջանային դատախազի առաջարկությամբ:

251 հոդ. կետ «բ» և «գ» նշված հիմունքներով գործը վերաբննելու մասին դիմումը տրվում ե գործն ըստ եյության քննող դատախազին, վորոշում ե միջնորդությունը բավարարելու հարցը: Դատարանի այն վորոշումը, վորով բավարարված ե վճիռը վերաբննելու միջնորդությունը՝ բողոքարկման յենթակա չե: Վճար վերաբննության մասին հարուցված միջնորդության մերժման դեմ կարելի յե մասնավոր դանդատ տալ (249 հոդ.):

Հոդ. 251 կետ «ա» նշված հիմունքներով գործի վերաբննության վերաբերյալ դիմումը տրվում ե Գերագույն դատարանին և լուծվում ե նրա պլենումի կողմից:

ՀՈԴ. 254

Արդժողովին, Հանրապետական դատախազին և նրա տեղակալին, Գերագույն դատարանի նախագահին և նրա տեղակալին իրավունք ե վերապահվում Հանրապետության ամեն մի դատարանից հսկողության կարգով վերանայելու համար պահանջելու, ամեն մի դործ, վորի վերաբերյալ վճիռը մտել ե որինական ուժի մեջ, ինչպիս նաև՝ կասեցնելու այդ գործի վճուի կատարումը մինչև դործի վերաբննվելը:

ՀՈԴ. 254-ա

Շրջանային դատախազներին, իրենց շրջանների ժողովրդականների գործերի վերաբերմամբ, նույնպես իրավունք ե վերապահվում հսկողության կարգով պահանջելու ամեն մի դործ, վորի վերաբերյալ վճիռը մտել ե որինական ուժի մեջ, առանց վճուի կատարումը կասեցնելու իրավունքով:

ՀՈԴ. 254-բ

Յեթե պահանջված գործի վերաբերյալ վճուի մեջ յերեվան ե դալիս գործող որենքների առանձին եյական խախտում, կամ բանվորագյուղացիական պետության, կամ աշխատավոր մասսաների շահների ակներեկ խախտում՝ հակառակ որենքի ուղղակի պահանջի, գործը հսկողության կարգով մտցվում ե ի վերաբննություն.—

ա) Գերագույն դատարանի քաղաքացիական կոլեգիայում, յեթե այն Գերագույն դատարանում չի քննվել վճուաբեկության կարգով:

բ) Գերագույն դատարանի պլենումում, յեթե գործի վերաբերյալ վիրոշումը քննվել ե Գերագույն դատարանի քաղաքացիական կոլեգիայում:

Գերագույն դատարանի քաղաքացիական կոլեգիան կամ Գերագույն դատարանի պլենումը գործը հսկողության կարգով քննելով կարող ե՝

ա) փոխել վճիռը, հանձնելով գործն ի նոր քննություն, կամ կարձել նրա վարույթը, հայց հարուցելու իրավունքի բացակայության կամ գործը դատարանին յենթակա չլինելու դեպքում, կամ՝

բ) ուժի մեջ թողնել գործում յեղած վճիռնենից մեկը, կամ՝

գ) փոխել վճիռը, կամ նոր վճիռ կայացնել, յեթե գործի բոլոր հանգամանքները լիսվին հաստատված են, և լրացուցիչ ապացույցների հավաքման ու սառեզման կարիք չկա:

ՀՈԴ. 254-գ

Գերագույն դատարանի քաղաքացիական կոլեգիայի, վորպես առաջին ատյանի և վորպես վճուաբեկ ատյանի, կայացրած վճիռները կարող են հսկողության կարգով բողոքարկվել Գերագույն դատարանի պլենումում Արդժողովին, Հանրապետության Դատախազի և նրա տեղակալի, Գերագույն դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից հսկողության կարգով բողոքալու ժամկետը չի սահմանափակվում:

ՀՈԴ. 254-դ

Հսկողության կարգով գործ հարուցելու ժամկետը շրջանային (քաղաքային) դատախազների համար սահմանվում ե յերեք ամիս, հաշված վճիռն որինական ուժի մեջ մտնելու օրից:

Արդարադատության ժողովրդական կոմիսարի, Հանրապետության դատախազի և նրա տեղակալի, Գերագույն դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից հսկողության կարգով բողոքալու ժամկետը չի սահմանափակվում:

Ծանոթություն.—Աշխատանքային գործերի վերաբերյալ ժողովրդական գատարանների վճիռները հսկողության կարգով բողոքարկել թույլատրվում ե համապատասխան վճիռ կայացնելու որբից՝ յեռամյա ժամկետում և այն ել միանգամայն բացառիկ գեղքում միայն:

Աշխատանքային գործերի վերաբերյալ դատական մարմինների վճիռները հսկողության կարգով փոխելու դեպքում, այդ վճիռների հիման վրա վճարած գումարներն աշխատավորից կարելի յե հետ գանձել միայն այն դեպքում, յեթե վճիռը փոխված ե աշխատավորի կողմից ներկայացված կեղծ փաստաթղթերի հիման վրա կամ հաղորդած սուտ տեղեկությունների հիման վրա։ Նշված դեպքում աշխատանքային գործերի վերաբերյալ յետ դանձումը թույլատրվում ե միայն դատական կարգով՝ ժողովադատարանի վճռով։ (1935 թ. 3/11, Որ. և Կարդ. Ժող., № 11, հոդ. 104):

ՀՈԴ. 256

Դատական վճիռն ի կատար ածող անձը կատարողական գործողությունների յե ձեռնարկում ըստ պահանջատիրոջ բանագոր կամ զրավոր դիմումների՝ պատշաճ կարգով տրված կատարողական թերթերի հիման վրա։

Ծանոթություն.—Ժողովրդական դատարանների կողմից վորոշված՝ մինչև 25 սուբի արժեք ունեցող գործերի, ինչպես նաև գյուղական վայրերում ապրող անձանց ապրուստի միջոցի վերաբերյալ գանձումները հանձնվում են գյուղական կատարածումներին։ (1929 թ. 9/10, Որ. Կարդ. Ժող., № 10, հոդ. 156):

ՀՈԴ. 266

Այն դեպքերում, յերբ դատական կատարածուի ստացած գումարները բավական չլինեն պարտապանի վրա դարձրած բոլոր գանձումները բավարարելու համար, հիշյալ գումարները, վճուի զատարման ծախքերը նախապես նրանցից հանելուց հետո, բաշխվում են Քաղ. Որենսդրի 101. 101-ա, 101-բ, 101-դ և 101-դ հոդվածներում մատնանշված կարգով։ (1929 թ. 4/7, Որ. և Կարդ. Ժող., № 8, հոդ. 107):

ՀՈԴ. 271

«Գանձումը գույքի վրա յե դարձվում պարտապանի գույքն արդելանքի տակ դնելու, կնքելու և վաճառելու միջոցով, բացի՝

1. Հանրայնացված սեկտորի հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների հետեւյալ գույքից՝

1) ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսդրի 22-րդ հոդվածի համաձայն ստարացման չենթարկվող պետական գույքը։

2) Կոռպերատիվ ու կոլտնտեսային, արդյունաբերական և տնայնարհեստավորական ձեռնարկությունների հետեւյալ գույքը։

ա) այն գույքը, վորը արվում է թված կազմակերպություններին, ձեռնարկություններին որենսդրական հատուկ ակտերի հիմունքներով։

բ) արտադրական մեքենաներ և գործիքներ, վորոնք անհրաժեշտ են արտադրական ձեռնարկության պահպանման համար։

գ) արտադրական մեքենաներ և գործիքներ, վորոնք անհրաժեշտ են թված կազմակերպությունների ոժանդակ և տնայնագործական ձեռնարկությունների համար։

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ նշված նպատակների համար ինվիստարի անհրաժեշտ քանակը ձշտորեն սահմանվում և տնտեսության արտադրական պլանի համաձայն, բռնագանձումը կատարող մարմինները դեկավարվում են այդ պլանի տվյալներով, իսկ մնացած դեպքերում վարոշում և ֆինանսինը՝ տնայնագործական կամ կոռպերատիվ շրջանային միության համաձայնությամբ։

ձ) Պետական, կոռպերատիվ, կոլտնտեսային և տնայնարհեստակցական կազմակերպություններին պատկանող այն շենքերը, վորոնք զբաղված են արդյունաբերական կամ արհեստագործական ձեռնարկություններով (ջրաղացներ, ձիթահաններ, յուղի, պանրի գործարաններ և այլն):

4) Տնայնարհեստագործական կազմակերպությունների անբաժան ֆոնդի և կոլտնտեսությունների ու արդյունաբերական կոլտնտեսությունների հետեւյալ ֆոնդերը, անբաժանելի, հասարակական, կապիտալ (հիմնական) շինարարության, սերմային և ապահովագրական ֆոնդեր։

5) Ձեռնարկությունը յերեք ամիս աշխատելու համար անհրաժեշտ քանակի հումքը և վառելանյութը։

6) Բնակելի և տնտեսական շենքերը։

7) Տվյալ տնտեսության արտադրական պլանները կատարելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական կենդանի ինվենտարը հետեւյալ չափով։

ա) մեկ ձի, կամ մեկ ուղար, կամ մեկ զույգ յեղ կամ մեկ մատղաշ անասուն, յուրաքանչյուր յերեք հետար այն վարելահողի համար, վորը մշակվում ե նույն անասունների միջոցով։

բ) անամսապահական խորհութեառություններում այն քանակությամբ կաթնատու անասուն, վոր անհրաժեշտ ե արտադրական պլանները կատարելու համար՝ համաձայն տեղական հողորդանների կամ պատշաճ դեպքերում՝ ՀՍԽՀ Հողժողկոմատի սահմանված նորմանների.

գ) գյուղատնտեսական կոլեկտիվների յուրաքանչյուր տնտեսությանն ընկնող մեկ կով և մեկ հորթ.

դ) տվյալ տնտեսության հոտը սպասարկող ցուլեր և աղնվացեղ անասուններ.

յե) կարակուլի և փափկամաղ վոչխարներ, ինչպես նաև փոքրանասակ գառներ և ուլեր:

8) Տվյալ տնտեսության արտադրական պլանները կատարելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական մեռյալ ինվենտար հետեւյալ չափերով՝

ա) յուրաքանչյուր 100 հեկտար վարելահողի համար 8 գութան, 4 փոցի, 2 բանող մեքենա.

բ) յուրաքանչյուր 100 հեկտար ցանքի համար 2 հավաքող մեքենա (հնձող գեքենա, խուրձ կապիչ և այլն), 2 կալսիչ հասարակ, կամ 1 կալսող բարդ մեքենա.

գ) յուրաքանչյուր 100 հեկտար խոտհարքի համար 2 խոտհարմեքենա և 2 փոցի.

դ) յուրաքանչյուր 100 հեկտար հող վարելու համար մեկ արակտոր և այլ այնպիսի ինվենտար, վորը հարկավոր և տնտեսությունը նորմալ կարգով վարելու համար.

ե) յուրաքանչյուր մեկ ձիու կամ մեկ զույգ յեղան համար 1 սայլ կամ 1 ֆուրդոն:

9) Զհավաքած բերք:

10) Ընթացիկ գյուղատնտեսական տարվա համար անհրաժեշտ քանակի սերմեր.

ա) ցանքերի համար անհրաժեշտ սերմերի քանակը տարբեր մշակույթների համար վորոշում են շրջանային գործդիր կոմիտեները, յենելով տեղի հողագործական պայմաններից ու հետեւյալ միջին նորմաններց:

Յուրաքանչյուր մեկ հեկտար հացահատիկային ցանքի համար 130—160 կիլոգրամ ցորեն, գարի, վարսակ, 1600—1900 կիլոգրամ կարտոֆիլ, 32 կիլոգրամ արեգածաղիկ, 32 կիլոգրամ կորեկ, լոբի, սիսեռ, վոսպ, 48 կիլոգրամ կանեփ, 16 կիլոգրամ կերի խոտաբույսեր, 50—60 կիլոգրամ բամբակ:

11) Անասունների կերն այն քանակությամբ, վոր անհրաժեշտ

և մինչև նոր բերքը հավաքելը կամ մինչև արոտը հանելը, յենելով մի ամսվա պահանջի հետեւյալ չափից—մեկ կովին կամ յեղան 325 կիլոգրամ չոր խոտ, մեկ զլուխ մանր անասունին 48 կիլոգրամ չոր խոտ, մեկ հորթին 212 կիլոգրամ չոր խոտ, մեկ ձիուն 325 կիլոգրամ չոր խոտ և 50 կիլոգրամ գարի, պատշաճ դեպքում չոր խոտը փոխարինվում ե դարմանով:

12) Վերադաս կոռպերատիվ կազմակերպությունները մուծվող՝ կոռպերատիվ կազմակերպությունների փայտագնարները:

13) Կոլտնտեսությունների և կազմակերպությունների ու հիմնարկների այն մուծումները, վորոնք հատկացվում են գյուղատնտեսական յերկարատեսվ վարկավորման ֆոնդին, սոցիալիստական գյուղատնտեսության ֆինանսավորման բանկում, ինչպես և այդ ֆոնդի անտոկոսաբեր ավանդները:

14) Պարտադիր ապահովագրական կարգով հասանելիք ապահովագրական վարձատրությունը:

15) Կոլտնտեսության պարենավորման արտադրանքի այն մասը, վորը կոլտնտեսականների մեջ բաշխվելու յե կոլտնտեսականներին և նրանց խնամքի տակ գտնվողներին մինչև հետեւյալ տարբա բերքը բաշխելու ժամանակ նրանց պարենավորումն ապահովելու համար, յենելով յուրաքանչյուր անձի համար պահանջվող հետեւյալ չափից՝ 16 կիլոգրամ ալյուր (կամ 18 կիլոգրամ հացահատիկ), 16 կիլոգրամ կարտոֆիլ, 3 կիլո ձավար, 400 գրամ բուսական յուղ կամ 500 գրամ յուղատու սերմ, 5 կիլոգրամ բոլոր տեսակի բանջարեղեններ:

Նայած տեղական պայմաններին, նշված մթերքները համապատասխան քանակությամբ կարող են փոխարինվել ուրիշներով, կոլտնտեսությունների արտադրանքի նշված մասը վորոշելու ժամանակ պիտի հաշվի առնել ավյալ տնտեսական տարվա արգեն բաշխված բերքը:

16) Բանվորների հասարակական սննդի համար զատվող խորհութեառական արտադրանքի այն քանակը, վորն անհրաժեշտ և առաջիկա յերեք ամիսների համար:

2. Բոնագանձումը չի կարող տարածվել կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, ինչպես նաև գյուղատնտեսական հարկման չենթարկվող (բացառությամբ 3-րդ կատեգորիայի յեկամանարկով հարկված հարկվողների) անձանց հետեւյալ զույքի վրա:

1) Ապահովատիբոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ամառային ու ձմեռային հագուստ, սպիտակեղեն, վունաման և տնային գործածության հետեւյալ իրերը.

ա) ամառային և ձմեռային հօրդուստ—մեկ անձնավորության համար մեկ ամառային կամ աշնանային վերարկու (կամ յափնջի և այլն), մեկ ձմեռային վերարկու (կամ կիսամուշտակ, վոչխարամուշտակ և այլն), մեկ ձեռք ձմեռային հագուստ (կանանց համար յերկու ձմեռային հագուստ), մեկ ձեռք ամառային հագուստ (կանանց համար յերկու ձեռք ամառային հոգուստ), մեկ զլխարկ, կանանց համար, բացի դրանից յերկու ամառային զլխաշոր և մեկ տաք զլխաշոր (կամ շալ), մեկ վոչխարամուշտակ այն ընտանիքին, վորը մշտապես զրադիվում և գյուղատնտեսությամբ.

բ) յուրաքանչյուր անձնավորության Յ ձեռք սպիտակեղեն.

գ) յուրաքանչյուր անձնավորության մեկ զույգ ամառային, մեկ զույգ ձմեռային կոշիկ և մեկ զույգ կրկնակոշիկ.

դ) կենցաղային գործածության անհրաժեշտ իրեր՝ յուրաքանչյուր անձնավորությանը ճաշի (ափսե, դանակ, պատառաքաղ, գդալ) և թեյի (բաժակ կամ չաշկա և բաժակապնակ) մեկ պրիբոր, մեկ աթոռ (տաքուրետիա), մեկ ձեռք անկողին (ներքնակ, բարձ, յերկու սավան, յերկու բարձի յերես, վերմակ), մեկ մահճակալ, անձնական յերկու յերեսարբիչ, յուրաքանչյուր ընտանիքին ինքնայռ (թեյաման ջուր յեփացնելու համար), պրիմուս (կամ կերասինկա), լամպ, հացանեղան, յերկու սփոռց, յերկու թեյի սրբիչ, յերկու խոհանոցի սրբիչ, յերկու զույլ, մեկ պահարան (կամ նրան փոխարինող մի այլ կարտասի՝ հագուստներ պահելու համար), խոռհանոցի անհրաժեշտ իրեր (կաթսա, ունելիք և այլն);

Ծանոթություն.—Նույն նորմաներով բռնադանձման լինթակա չի ընտանիքի հարգելի պատճառներով բացակալող այն անդամների գույքը, փորոնք գյուղատնտեսական հարկը հաշվելիս հաշվառված են:

2) Այն քանակությամբ վառելիքի պաշար, վոր անհրաժեշտ և ապառքատիրոջը յերեք ամիս կերակուր յեփելու և շենքը ապացնելու համար:

3) Արտադրության սարքավորում, գործիքներ, ձեռնարկներ և գրքեր, փորոնք անհրաժեշտ են առանց վարձու աշխատանքի աշխատող ապառքատիրոջ պրոֆեսիոնալ զրադմունքների համար և մեկ վարձու աշխատավարձով աշխատողի համար, յեթե դա պահանջում են արտադրության պայմանները և նրանք դրկած չեն խորհուրդների ընտրական իրավունքից.

ա) այն կատեգորիայի ապառքատիրոջ արտադրության գործիքները, փորոնք անհրաժեշտ են նրա զբաղմունքի և տնայնա-

գործության արհեստի համար և վորոնք համաձայն գործող Որենություն՝ արհեստահարկով չեն հարկվում:

Անձնական պրոֆեսիոնալ զրադմունքների համար անհրաժեշտ արտադրության միջոցներ, գրքեր ու ձեռնարկներ:

Ծանոթություն.—3-րդ կետում նշված առարկաները չեն բռնադգում նաև այն կատեգորիայի անձնավորություններից, վորոնք պաշտոնավարում են կամ աշխատում են վարձով (գարբին, հյուսն, մանայոր, բժիշկ, յերաժիշտ, գծագրող և այլն), ինչպես նաև ուսանողներից:

4) 3-րդ կետում նշված անձնավորությունների ֆաստական աշխատանքի համար յերկու ամսվա ընթացքում հումք և վառելիք:

5) Կոլտնտեսականների անասունը, թոշուններն ու գյուղատնտեսական ինվենտարը հետեւյալ չափով՝

ա) յուրաքանչյուր տնտեսության մեկ կով, մինչև 1 և կես տարեկան հասակի մեկ հորթ, անային թռչուններ (հավ, սագ, բաղ) յուրաքանչյուր տեսակից 5 համար վոչ ավելի՝ վոչխարներ մինչև գառները ծծից կտրելը, այսինքն՝ ծնելու որից 4 ամսվա ընթացքում:

Ծանոթություն.—Մեկ գլուխ խոշոր յեղջուրավոր անասունը հավասարեցվում և հարկվող հասակի 6 գլուխ մանր անասունի (վոչխար, այծ):

բ) գյուղատնտեսական ինվենտար. յուրաքանչյուր տնտեսության անհրաժեշտ մանր ինվենտար (գերանդիներ, մանգաղներ, կացիններ, փոցիներ, յեղաններ, բահեր և այլն), վորոսորդության, ձկնորսության և այլ արհեստների համար անհրաժեշտ գործիքներ, վորաեղ այդ արհեստները հանդիսանում են տնտեսության յեկամուտի հիմնական աղբյուրը:

6) Կոլտնտեսականների բնակելի և տնտեսական շենքերը, այլև շինարարության համար պետական որգաններից արտոնյալ պայմաններով ստացված փայտանյութը:

7) Պարենավորման մթերքներ այն քանակությամբ, վոր ապահովի կոլանտեսականների և նրանց խնամքի տակ գտնվողների պահանջը՝ մինչև նոր բերքը, յենելով մեկ ամսվա պահանջի հետեւյալ չափից—14 կիլ. տլյուր (կամ 16 կիլոգր. ցորեն), 16 կիլոգր. կարտոֆիլ, 2 կիլոգր. ձավար, 1— $\frac{1}{4}$ կ. աղ, 400 գրամ բուսական յուղ (կամ 1 և կես կիլոգր. յուղատու սերմեր), 4 կիլոգր. բոլոր տեսակի բանջարեղեն:

8) Սերմեր, տեսական հողային որգանների կողմից սահմանված նվազագույն չափով:

9) Անասունների համար կեր՝ այն քանակությամբ, վորն անհրաժեշտ է մինչև նոր բերքը հավաքելը կամ մինչև արոտը հանելը, յեխելով մեկ ամսվա պահանջի հետեւյալ չափից, — 1 կովին 325 կիլոգր. չոր խոտ, մեկ զլուխ մանը անասունին 48 կիլոգր. չոր խոտ, մեկ հորթին՝ 212 կիլոգր. չոր խոտ, մեկ ձիուն՝ 325 կիլոգր. չոր խոտ և 50 կիլոգր. դարի: Պատշաճ գեղբում չոր խոտը փոխաբնվում է զարմանով:

10) Բանջարանոցների, պաղատու և խաղողի այգիների և հատապտուղների չհավաքված բերքը, բացի արդյունաբերական նշանակություն ունեցողներից:

11) Կոռուկերատիվ կաղմակերպությունների անդամների փայտվարները:

12) Պարտադիր ապահովագրությունից ապահատիրոջն համնող ապահովագրական վարձատրությունը, այլև սոցիալական ապահովագրության կամ, սոցիալական ապահովման էարդով արվող գումարները:

3. Բռնագանձումը չի կարող տարածվել աշխատավոր մենամանտեսների հետեւյալ գույքի վրա՝

1) Մեկ բնակելի կամ անմիջականորեն նրա հետ կապ ունեցող տնտեսական շենքերի:

2) Վառելիքը այն պաշարի քանակության, վոր անհրաժեշտ և բնակելի շենքերը յերեք ամսվա ընթացքում տաքացնելու համար:

3) Ապահատիրոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ձմեռային և ամառային հագուստի, սպիտակեղենի և կոշկեղենի ու տնային կենցաղի համար անհրաժեշտ այն բանակությամբ իրենի, վոր նշված է սույն հողվածի 2-րդ հատվածի 1-ին կետում:

4) Կոռուկերատիվ կաղմակերպությունների անդամների փայտվարների,

4. Կուլակային տնտեսություններից և 3-րդ կատեգորիայի յեկամահարկով հարկվող անձնավորություններից բռնագանձումը չի կարող գարձել տպառքատիրոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ամառային և ձմեռային հագուստի, կոշկեղենի, սպիտակեղենի և տնային կենցաղի այլ անհրաժեշտ հետեւյալ իրենի վրա՝

1) Ձմեռային և ամառային հագուստ մեկ անձի համար ամառային կամ աշնանային մեկ վերաբերու (կամ յափնչի և այլն), ձմեռային մեկ վերաբերու (կամ կիսամուշակ, մուշտակ և այլն) մեկ ձմեռային հագուստ (կանանց համար յերկու ձեռք ձմեռա-

յին հագուստ), մեկ զլիարկ (իսկ կանանց համար բացի դրանից ամառային զլիարկը, մեկ տաք զլիաշոր կամ շալ):

2) Յուրաքանչյուր անձին յերկու ձեռք սպիտակեղեն:

3) Յուրաքանչյուր անձին մեկ զույգ ամառային և մեկ զույգ ձմեռային կոշիկ:

4). Տնային կենցաղի այլ անհրաժեշտ իրերի—յուրաքանչյուր անձին մեկ ճաշի (ափսե, պատառաքաղ, դանակ, գդալ) և մեկ թեյի (բաժակ և բաժակապնակ) պրեբոր, մեկ աթոռ (տաբուրետակ), մեկ ձեռք անկողին (ներքնակ, բարձ, յերկու սավան, յերկու բարձի յերես, վերմակ), մեկ մահճակալ, յերկու յերեսըրեիչ, յուրաքանչյուր ընտանիքին ինքնայեռ (թեյաման՝ ջուր յեփացնելու համար), պրիմուս (կամ կերասինկա), լամպ, ձաշասեղան, թեյի յերկու սրբիչ, խոհանոցի յերկու սրբիչ, յերկու դույլ, մեկ պահարան (կամ նրան վոխարինող մեկ այլ կարասիք հագուստեղենը պահելու համար), խոհանոց ային ամենահրաժեշտ իրեր (կաթսաներ, ունելիք և այլն):

2) ՀՍԽՀ Քաղաքացիական Դատավարության Որենսգիրքը լրացնել 271-ա, 272-ա, 272 թ, 272-դ և 272-ե հոդվածներով հետեւյալ բովանդակությամբ:

ՀՌԴ. 285-ա

«Յերկու շաբաթ» և «մեկ շաբաթ» խոսքերը փոխարինված են բառերով՝ «տասնչորս որ» և «յոթ որ»:

ՀՌԴ. 286-ա

«Յերկու շաբաթ լա» բառերը փոխարինված են «տասնչորս որվա» բառերով. (1930 թ. 4/10, Որ. և կարգ. Ժող., № 12, հոդ. 213):

289 հոդվածի «բ» կետը

Նվազագույն աշխատավարձից ավելի ստացածից կարելի յեպահել վոչ ավելի քան 50 տոկոս—1) ընտանիքի անդամների ապահուստի համար, 2) աշխատանքով չհատուցված կանխավճարները, վճարված ճանապարհածիքն ու ստացած հատուկ հագուստի արժեքը ծածկելու համար այն բանվորներից, վորոնք անտառահատման ու փայտապարաստման և լաստառաքման (ոլավինե) աշխատանքներից հեռանում են պայմանագրով սահմանված ժամկետից կամ վորոշված աշխատանքը կատարելուց առաջ:

Նվազագույն աշխատավարձից ավելի ստացածի մացորդից

գանձման մեացած բոլոր տեսակների համար չել կարելի 20 տոկոսից ավելի պահել: (1930 թ. 31/5, Որ. և Կարդ. Ժող., № 6, հոդ. 116):

ՀՈԴ. 300

Արգելագրյալ գույքը վաճառվում է հրապարակային աճուրդով, բացառությամբ այն դեպքերի, վորոնք մատնանշված են այս Որենսգրքի 316 ա հոդվածում: (1930 թ. 4/10, Որ. և Կարդ. Ժող., № 12, հոդ. 212):

ՀՈԴ. 316

«Մի շաբաթից» բառերը փոխարինված են «յոթ որ» բառերով (1930 թ. 4/10, Որ. և Կարդ. Ժող., № 12, հոդ. 213):

317 հոդվածի ծանոթություն

Ծանոթություն.—Առեվտրական հաշվով գործող (անսեսավարական) պետական ձեռնարկությունների, անկախ նրանց կալմազերպության ձեվից (արեստներ, պետառներ, պետական բաժնետիրական ընկերություններ, սինդիկատներ և այլն), խառը բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև տեղական և աստիճանի կոռպերատիվ կազմակերպությունների միանանակությունը կարգավորվում է պետական ձեռնարկությունների ու խառը բաժնետիրական ընկերությունների միանակության վերաբերյալ կանոնադրությամբ և կոոպերատիվ կազմակերպությունների միանակության վերաբերյալ կանոնադրությամբ, վորոնք հաստատված են ԽՍՀՄ կենտրոնական և ֆուզիոնարհի կողմից 1929 թ. փետրվարի 6-ին (1929 թ. 19/6, Որ. և Կարդ. Ժող., № 7, հոդ. 99):

ՀՈԴ. 320

«Յերկու շաբաթվա» բառերը փոխարինված են «ատանջորս որվա» բառերով (1930 թ. 4/10, Որ. և Կարդ. Ժող., № 13, հոդ. 213):

ՀՈԴ. 340

Պարտատերներն իրենց պահանջները ներկայացնում են լիկվիդատորներին վոչ ուշ, քան յերեք ամսվա ընթացքում, հաշված այն որից, յերբ լիկվիդատորները հայտարարում են, վոր անցել են իրենց պարտականությունների կատարմանը:

Աշխատավարձի, ապրուստի միջոցների (ալիմենտ) և մահվան կամ խեղանդամության դեպքում տրվող վարձատրության վերտերյալ պահանջները, այլև թաղաքացիական Որենսգրքի 101 հոդվածի համաձայն աշխատավարձին հավասարեցրած պահանջները (բայց սոցիալական ապահովգորության պահանջներից), ինչպես նաև որինական ուժի մեջ մտած դատական վճռի վրա հիմնված պահանջները, կարող են տասնչորս որվա ընթացքում համապատասխան հարց հարուցել այդ վճռությունը վերաբններու կամ պահանջները չեղյալ համարելու մասին:

Այն գեպքում, յերբ սոցիալական ապահովգորության վերաբերյալ պահանջները վիճելի յեն ձանաչվում, լիկվիդատորները կարող են նույն տասնչորս որվա ընթացքում

բերյալ ոլահանջները, ինչպես նաև թաղաքացիական Որենսգրքի 101-ը հոդվածի համաձայն աշխատավարձի հավասարեցրած պահանջները կարող են հայտնվել նաև վերոհիշյալ յեռամսյա ժամանակամիջոցը լրանալուց հետո, մինչև լիկվիդատորների կազմած հաշվով դատարանի կողմից հաստատվելը: Այս կարգի պահանջների նկատմամբ լիկվիդատորների վրա պարտականությունն ե զըրվում ձեռք առնելու բոլոր միջոցները այդ պահանջները յերեվան հանելու իրենց նախաձեռնությամբ, անկախ համապատասխան հայտարարություններ ստանալուց:

Պահանջները հայտնելու հանգամանքը ընդհատում է վաղեմիության ընթացքը սնանկ պարտապահի նկատմամբ:

Այս հոդվածում նշված ժամանակամիջոցում չհայտնված պահանջները յենթակա չեն լիկվիդացիայի կարգով բավարարելու:

ՀՈԴ. 342

Լիկվիդատորները պահանջները ստացման կարգով մուծում են հատուկ մատյանի մեջ. շահագրգոված անձինք իրավունք ունեն հայելու այդ մատյանը և խկական հայտարարություններն ու նրանց կցված փաստաթղթերը:

Լիկվիդատորները պարտավոր են ըննության առնելու բոլոր պահանջները և վիճելի կամ անվիճելի համարելու, վորոշելով, թե յուրաքանչյուր պահանջ բավարարման վեր հերթին ե պատկանում (345 հոդվ.), և այդ մասին անհապաղ հիշատակություն անելու մատյանում:

Վիճելի համարված պահանջները պետք են հանվեն բավարարման ցուցակից:

Ծանոթություն.—Այն գեպքերում, յերբ լիկվիդատորները վիճելի յեն համարում աշխատավարձի, ապրուստի միջոցի (ալիմենտ), սոցիալական ապահովգորության և մահվան կամ խեղանդամության դեպքում տրվող վարձատրության վերտերյալ պահանջները, այլև թաղաքացիական Որենսգրքի 101 հոդվածի համաձայն աշխատավարձին հավասարեցրած պահանջները (բայց սոցիալական ապահովգորության պահանջներից), ինչպես նաև որինական ուժի մեջ մտած դատական վճռի վրա հիմնված պահանջները, կարող են տասնչորս որվա ընթացքում համապատասխան հարց հարուցել այդ վճռությունը վերաբններու կամ պահանջները չեղյալ համարելու մասին:

Այն գեպքում, յերբ սոցիալական ապահովգորության վերաբերյալ պահանջները վիճելի յեն ձանաչվում, լիկվիդատորները կարող են նույն տասնչորս որվա ընթացքում

համապատասխան դաշնութեատ տալ սոցիալական ապահոված ովայ գրության վերաբառմարմին (աստիճանական կարգով): Մինչև գատարանի կամ սոցիալական ապահովագրության պատշաճ մարմինի կողմից այդ հարցի կամ դանդատի մասին վճիռ կայացնելը, հիշյալ պահանջները յենթակա լեն բավարարման վորպես անվիճելի պահանջներ: (1930 թ. 4/10, Որ. և Կարգ. ժող., № 12, հոդ. 210):

ՀՈԴ. 343

«Յերկու շաբաթված բառերը փոխարինված են «տասնչորս որդիքա» բառերով (1930 թ. 4/10, Որ. և Կարգ. ժող., № 12, հոդ. 213)»

ՀՈԴ. 345

Բոլոր պահանջները, նրանց բավարարման հաջորդականության տեսակետից հերթի յեն դրվում Քաղաքացիական Որենսոգրքի 101, 101-ա, 101-բ, 101-դ, հոդվածների և Քաղաքացիական Դատավարության Որենսոգրքի 266 հոդվածի համաձայն:

Յուրաքանչյուր հերթի սահմաններում պահանջները բավարպվում են համաչափության էարգով: Լիկվիդատորները հաջորդ հերթի բավարարման անցնելու իրավունք ունեն միայն նախընթաց հերթերը լիովին բավարարելուց հետո:

Քաղաքացիական Որենսոգրքի 101 հոդվածի «ա» կետում նըշված պահանջները բավարպվում են հետզհետե, լիկվիդացիայի յենթարկող գույքի հաշվին ստացվող միջոցների համեմատ, չսպառելով վորեվե ժամկետ լրանալուն:

Յեթե տվյալ պահանջները ներկայացնելուց հետո յերեք որդիքա ընթացքում լիկվիդատորները չբավարարեն այն, ապա պարտատերը այդ պահանջի համաձայն կարող է ընդհանուր հիմունքներով գանձում կատարել: (1930 թ. 4/10, Որ. և Կարգ. ժող., № 12, հոդ. 210):

3. Ներքուժիշտ ՀՅՈՎԱԾՆԵՐՈՎ ԼՐԱՑՎՐԸ Ե ՀՅՈՒՅ ՔՅՈՒՅԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

26-րդ նոդվածը լրացված ե 2-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ

ԽՍՀ Միության մեջ բնակավայր չունեցող կամ ժամանակավոր բնակավայր չունեցող պատասխանողին հայց կարող ե ներկայացվել նրա գույքի գոնվելու տեղում կամ նրա վերջին հայտնի բնակավայրում, կամ զբաղմունքի վայրում:

ՀՈԴ. 31-ա

Այն գեղքերում, յերբ գործին մասնակցող կողմը հանդիսանում ե ինքը դատարանը, նրա գործը քննության և տրվում մատակա համապատասխան դատարանին այն գեղքում միայն, յերբ այդ մասին միջնորդություն ե հարուցում մյուս կողմը, վոչ ուշ քան գործի վերաբերյալ դատական առաջին նիստը:

ՀՈԴ. 33-ա

Վորեվե դատարանի կողմից իր վարույթում՝ նրա իրավասության սահմանում ընդունած գործը, բոլոր գեղքերում, ըստ եյտության պիտի քննվի նույն այդ դատարանի կողմից, բացառությամբ 103 հոդ. նախատեսնված գեղքերից, թեկուզ դոժի ընթացքի ժամանակ նա յենթակա լինի այլ դատարանի իրավասության, ժամանավորապես յեթե հայցագինը գերազանցում ե նախնական հայտարարված հայցագնից, անցնում ե տվյալ դատարանի իրավասության սահմաններից, կամ յերբ ներկայացվում ե հակընդդեմ հայց, վորն իր գնով գերազանցում ե այդ սահմանը:

ՀՈԴ. 42.ա

Վկաներին վարձատրելու և նրանց ձանապարհածախա վճարե-

լու անհրաժեշտ գումարը մուծվում է ծախսերի մեջ և զանձվում է գործին մասնակցող կողմերից՝ այս Որենսգրքի 45, 46, 47 և 47-ա հոդվածների կարգով:

ՀՈԴ. 45-ա

«45-ա վորպես բացառություն նախկին հոդ. (հոդ. 45) կանոններից, դատարանը, յենելով կողմերի սոցիալական ու նյութական պայմաններից, կարող է փորձագետներին վճարելու և վկաներին վարձատրելու անհրաժեշտ գումարը գանձել ինչպես դատին մասնակցող յերկու կողմից, նույնպես և մեկ կողմից, անկախ նրանից, թե ում նախաձեռնությամբ են նշանակված փորձագիտությունը կամ վկաներ հրավիրելը:

Կողմերի կողմից այդ գումարները վճարելուց խուսափելու դեպքում, այն դատարանի վորոշումով բռնագանձվում են հարկադիր կարգով:

Դատարանը յենելով կողմերի սոցիալական և նյութական պրոթյունից կարող է նաև նրանց ազատել այդ գումարների լրիվ կամ մասնակի մուծումից:

Համենայն դեպք 45-րդ հոդված. նշված անհրաժեշտ ծախքերը չեն կարող դրվել այն միանարկության, ձեռնարկության, կազմակերպության և այն անձնավորությունների վրա, վորոնք տպատված են պետական միանական տուրքից (հոդ. 43):»:

ՀՈԴ. 47-ա

Յեթե հոգուտ պետական միանական տուրքի գանձման յենթակա գումարը (հոդ. 46) վճարելու համար հայցվորը, այս Որենսգրքի 43 հոդ. ուժով ազատված են, յեղել վերոհիշյալ տուրքերը մուծելուց, ինչպես նաև զործը վարելու դատարանի կրած ծախքերը (հոդ. 47) մեկ ուուր. պակաս են, ապա նշված զանձումները չեն կատարվում և դատարանի կրած ծախսերը ընդունվում են գանձմարանի հաշվին»: (1935 թ. 3/11, Որ. և Կարգ. Ժող., № 11, հոդ. 105),

ՀՈԴ. 52 Ծանոթույուն

49, 50, 51, 52-րդ հոդվածների կարգով տուգանելու դեպքում, դատարանի վորոշումները գանդատարկման յենթակա չեն, սակայն ժողովրդական դատավորն իրավասու յեն, առանց կողմերին հրավիրելու, նշանակված տուգանքը միանձնաբար զիջելու, յեթե

կան հարգելի պատճառներ: (1932 թ. 9/3, Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 13):

ՀՈԴ. 78 ծանոթություն

Այս հոդվածով նախատեսնված կարգը ժողովրդական դատավորը կարող է տարածել իր իրավասության յենթակա վրոշ կատակորիայի գործերի վրա, նայած նրանց բարդությանը, բնույթին և հայցվորի սոցիալական դրությանը:

(1929 թ. 4/9, Որ. և Կարգ. Ժող., № 10, հոդ. 149):

ՀՈԴ. 113 ծանոթություն

Այս հոդվածում մատնանշված առիթները, յեթե յերեվան են դալիս մինչև գործի դատավարությունը, ժողովրդական դատավորը պարտավոր է միանձնաբար կասեցնել դատաքննությունը:

(1932 թ. 9/3, Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 13):

ՀՈԴ. 114 ծանոթություն I

Արգելվում է գործը հետաձգել կամ կասեցնել՝ կողմերի միջին հաշտարար բանակցություններ վարելու համար:

(1929 թ. 4/9, Որ. և Կարգ. Ժող., № 10 հոդ. 149):

ՀՈԴ. 114 ծանոթություն II

Այս հոդվածում մատնանշված առիթները, յեթե յերեվան են դալիս մինչև գործի դատավարությունը, ժողովրդական դատավորը նույնպես կարող է միանձնաբար կասեցնել դատաքննությունը:

ՀՈԴ. 171 ծանոթություն

167, 168 և 169-րդ հոդվածներում նախատեսնված լինղիւնները կարելի յեն հարուցել թե մինչև գործի դատավարությունը և թե դատավարության ընթացքում:

Յեթե նման դիմումները ստացվում են մինչև դատաքննությունը, ժողովրդական դատավորը կարող է նման հարցելու լուծել միանձնաբար:

ՀՈԴ. 172 ծանոթություն

Այս հոդվածում մատնանշված առիթները, յեթե յերեվան են դալիս մինչև գործի դատավարությունը, ժողովրդական դատավորը կարող է առանց կողմերին հրավիրելու, միանձնաբար կատարել նույն գործողությունը:

Յեթե դատավճիռը կայացնելիս, վճռի կատարման կարգը չի փորոշված, ժողովրդական դատավորը՝ շահագրդովովի դիմումի համաձայն, կողմերին հրավիրելու կարգով, կարող եւ միանձնաբար քննության ամենել դատավճռի կատարումը հետաձգելու. կամ մի քանի նվազի բաժանելու հարցը, աչքի առաջ ունենալով կողմերի նյութական վիճակը կամ գործի հանգամանքները:

(1932 թ. 9/3, Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 13):

ՀՈԴ. 234-Ծ ծանոթություն

Ի պահ ընդունված ավանդների և գրավ դրված արժեթղթերի համար վարկային հիմնարկների կողմից տրված վոչ անվանական կորած անդորրագրերի վերականգնումը կարող եւ աեղի ունենալ միայն այս դատավարության կանոնների կարգով։ Անդորրագրի տերը պարտավոր եւ դատարան ներկայանալու անդորրագրի կորստյան ժամանակին տրված հայտարարությունը հրապարակելու որից մեկ տարի ժամանակամիջոցում։

(1929 թ. 18/9, Որ. և Կարգ. Ժող., № 10, հոդ. 153):

ՀՈԴ. 235-ա

Գանգատարկման յենթակա չեն և անհապաղ ուժի մեջ են մասնում հետեւյալ վճռները, բացառությամբ աշխատանքային և հողային գործերի։

ա) Յեթե դատարանի կողմից բավարարված կամ մերժված հայցի գինը 100 սուբլուց ավելի չե։

բ) Յեթե դատակիրն ընդունում եւ հայցն առանց գումարի սահմանափակման։

գ) Յեթե վճռը հիմնված է որենքով սահմանված փաստաթղթերի վրա, յերբ նոտարական ժակագրության պայմանաժամը անցել եւ (բացի մուրհակներից)։

դ) Յերբ վճռը վերաբերում է բնակարանային ընկերությունների անդամակցության հարցին։

(1929 թ. 4/9, Որ. և Կարգ. Ժող., № 10, հոդ. 149 և 1931 թ. 22/12, Որ. և Կարգ. Ժող., № 4, հոդ. 253):

ՀՈԴ. 271-ա

Պետական հիմնարկություններից և ձեռնարկություններից, կոռպերատիվ, արհեստակցական և հասարակական կազմակերպու-

թյուններից ու կոլտնտեսություններից վատնած, հափշտական կամ յուրացրած գույքի հատուցման կարգով, քրեական կամ քաղաքացիական դատարանի վճռած գումարների գանձումը տարածական կում և ամբողջ գույքի վրա (բացառությամբ այն գույքի, վորոնց վրա 271 հոդ, համաձայն բռնագանձում չի կարող տարածվել), վորը դատապարտյալի (պատասխանողի) հետ միասին պատկանում են նաև ուրիշ անձնագորությունների, այդ թվում նաև գյուղական ծխի ընդհանուր գույքի վրա, վորի կազմին պատկանում են դատապարտվածը (պատասխանողը), այլև ամուսինների ընդհանուր գույքի վրա, յեթե դատարանով կհաստատվի, վոր ընդհանուր գույքը ավելացել են հանցագործության շնորհիվ։

Գանձումը ընդհանուր գույքի վրա դարձնելը թույլ եւ տրվում միայն դատավճռի կամ վորոշման մեջ այդ մասին համապատասխան հիշատակություն անելու դեպքում։

Մանրություն—Այս հոդվածի ուժը տարածվում է միայն այն գեղեցիկ վրա, յերբ վատանելու, յուրացնելու կամ հափշտակելու մոմենտից մինչև քրեական հետապնդում հարուցելու մոմենտ 2 տարուց ավելի չի անցել։

(1935 թ. 23/9, Որ. և Կարգ. Ժող., № 9, հոդ. 86):

ՀՈԴ. 271-բ

Պետական խնայողական գանձարկները՝ ինչպես նաև սպառողական և գյուղատնտեսական ու արհեստագործական ընկերությունները մուծած ավանդների վրա գանձում դարձնել և արգելք դնել կարելի յեւ միայն դատական և դատաքննչական ժարմինների՝ քրեական գործերի վերաբերյալ վորոշումների հիման վրա։ Մատնանշված ընկերություններում պահպող ավանդների վրա, բացի դրանից, թույլ եւ տրվում գանձում դարձնել և արգելք դնել նաև այդ աշխանդներն ընդունած կազմակերպությունների ուժին կատարվող գանձումների վերաբերյալ գործերով։

(1930 թ. 3/5, Որ. և Կարգ. Ժող., № 5, հոդ. 101):

ՀՈԴ. 271-գ

Վարկային հիմնարկի կողմից ընդունված չեկի գումարի վրա կարող չեկատուի դեմ հարուցված պահանջների բավարարման կարգով արգելք կրվել կամ գանձում դարձվել մինչև չեկի ներդործության որինական ժամանակամիջոցի լրանալը։

(1930 թ. 3/5, Որ. և Կարգ. Ժող., № 6, հոդ. 113):

ՀՈԴ. 271-Դ

Հեղինակի իրավունքի վրա՝ հեղնակի պարտատիրոջ կողմից չի կարող գանձում դարձվել:

Գանձումը կարելի յէ դարձնել այն յեկամուաների վրա, վոր հեղինակը ստանում է իր իրավունքից:

(1928 թ. 5/11, Որ. և Կարգ. Փող., № 14, հոդ. 154 և 1935 թ. 23/9, Որ. և Կարգ. Փող., № 9, հոդ. 86):

ՀՈԴ. 272-Ա

Վարկատուները տնտեսական մարմինների կապիտալ շինարարության հաշիվների վրա կարող են գանձում տարածել միայն այն պահանջներով, վորոնք Արբիտրաժի կամ դատարանի կողմից ընդունված են և վորոնք վերաբերում են կապիտալ շինարարությանը:

ՀՈԴ. 272-Բ

272-ա հոդվածում նշված գումարը կարող է տարածվել տրնտեսական մարմինների կողմից կապիտալ շինարարության համար բաց թողնված բոլոր միջոցների վրա անկախ նրանից, թե այդ միջոցները վեր որյեկտին են վերաբերում և յիշը է ծագել վարկատույի տվյալ պահանջը, յեթե միայն վաղեմությունը չի անցել:

ՀՈԴ. 272-Ը

Կապիտալ շինարարության հաշիվներում միջոցների բացակայության դեպքում վարկատուները կարող են գանձումը տարածել տնտեսական մարմիններին պատկանող ամեն մի գույքի վրա, վորը վերաբերում է կապիտալ շինարարությանը, բացառությամբ այն գույքերից, վորոնց վրա գործող որենսդրությամբ գանձումը դարձնել չի թույլատրվում:

ՀՈԴ. 272-Դ

Վարկատուները կարող են գանձումը դարձնել տնտեսական մարմինների եքսպլոատացիոն և այլ գույքերի վերաբերյալ հաշվարկային այն հաշիվների վրա, վորոնք չեն վերաբերում կապիտալ շինարարությանը և պայմանավորված են միայն այդ մարմինների, բացի կապիտալ շինարարությունից, այլ հիմունքներից բղխող պարտականություններով:

Դատարանի կամ Պետարբիտրաժի մարմինների հատուկ վարո-

շումերով, վարպես բացառություն 272-ա և 272-դ հոդվածների, վարկատուները կարող են գանձումը դարձնել այն պահանջների վրա, վորոնք վերաբերում են կապիտալ շինարարությանը, տնտեսական մարմինների եքսպլոատացիոն վերաբերվող հաշվարկային հաշիվների վրա և ընդհակառակը՝ այլ հիմունքներից բղխող պահանջների կապիտալ շինարարության հաշվին: Դատարանը և Պետարբիտրաժի մարմինները այդպիսի վորումը կարող են կայացնել այն դեպքում, յերբ կհաստատվի տնտեսական մարմնի մի հաշվի՝ մյուս հաշվին ունեցած պարտքը (վորոշված ժամկետին ամուրագիոն վճարումների և շահույթների չփոխանցումը, կապիտալ շինարարության կարիքների համար ոգտագործել և այլն):

ՀՈԴ. 272-Ե

Վորպես բացառություն 272-ա և 272-դ հոդվածների, հանրայնացված սեկտորի կազմակերպությունների միջեվ տեղի ունեցող վեճերով 500 սուբ. վոչ ավելի գումարի կատարողական վատաթղթերով գանձումն անմիջականորեն առաջարկվում է պարտատիրոջը և գանձումը դարձվում է պարտատիրոջ բանկում ունեցած հաշիվների վրա այն դեպքում միայն, յերբ պարտատնը բացի բանկում ունեցած հաշիվներից ուրիշ վորեվից այլ գույքը չունի:

(1935 թ. 23/9, Որ. և Կարգ. Փող., № 9, հոդ. 86):

ՀՈԴ. 285-Դ

Յերբ գանձողը և պարտապանը հանդիսանում են հանրայնացրած սեկտորի կազմակերպություններ, գանձումը կատարվում է վարկային հիմնարկություններում գանցող գումարներից: Գանձուղը կատարողական թերթը (կամ 255-րդ հոդ. նշված մի այլ փաստաթուղթ) անմիջաբար ներկայացնում է վարկային հիմնարկությանը, վորը կատարում է գանձումը բանկի կողմից մշակված և Արդժողկումատի հետ համաձայնեցրած կանոնների հիման վրա:

Այդ դեպքում Քաղ. Դատ. Որ. 257, 262, 284, 285 և 287 հոդվածները չեն կիրավում:

Յեթե վճիրը կատարելու ժամանակ առաջանում է այնպիսի հարց, վորը յենթակա չե Պետարբին կարկային այլ հիմնարկության իրավասությանը, համապատասխան վարկային հիմնարկությունը կատարման թերթն ուղարկում է դատական կատարածուին՝ գանձումն ընդհանուր կարգով կատարելու համար:

(1934 թ. 4/1 Որ. և Կարգ. Փող., № 1, հոդ. 3):

Ոտար պետության պատկանող գույքի վրա արգելք դնել և գանձում դարձնել կարելի յե միայն յուրաքանչյուր առանձին գեղքում, նախապես ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդից թույլտվություն ստանալուց հետո.

(1929 թ. 18/9, Որ. և Կարգ. Ժող., № 10, հոդ. 154):

ՀՈԴ. 289 ծանոթություն III

Իր բացառիկ իրավունքի ամբողջական կամ մասնակի ոտարաման համար հեղինակին հասանելիք վարձատրության գանձման կարգը հավասարեցվում է աշխատավարձի գանձման կարգին:

ՀՈԴ. 289 ծանոթություն IV

Իր յերկը ոտարելու կամ հեղինակի իրավունքի խախտման համար հեղինակին հասանելիք վարձատրության վրա զանձում դարձնելու կարգը հավասարեցվում է աշխատավարձի գանձման կարգին:

(1928 թ. 5/11, Որ. և Կարգ. Ժող., № 14, հոդ. 154):

ՀՈԴ. 316-ա

Այն բոլոր գեղքերում, յերբ գործող որենքների համաձայն թանգարժեք մետաղներից ու քարերից արտադրած շինվածքներն ու մարդ սրիաները յենթակա յեն աճուրդով վաճառքի դատական կատարածուների կողմից, վերջիններն առանց աճուրդ նշանակելուղարկում են այդ արժեքավոր առարկաները Անդրառեվտրի Ժողկոմատի ՀՍԽՀ լիտորի վարչության:

Մանրաւրյուն.—Այս հոդվածում նշված թանգարժեք մետաղներից ու քարերից արտադրած շինվածքներն և մարգարիտներն իրացնելու կարգը սահմանվում է Անդրկենտգործկոմի և Ա.Ս.Ֆինչ ժողկոմիորհի 1930 թ. հունիսի 24-ի «Թանգարժեք մետաղներից ու քարերից արտադրած շինվածքների և մարգարիտների աճուրդով վաճառքը դադարեցնելու, նույնացնելու և առարկաների իրացման գործը հանրապետական առաջնորդություններին հանձնելու մասին» վորոշումով (Ա.Ս.Ֆինչ Որ. և Կարգ. Ժող., 1930 թ., № 12, հոդ. 141) (1930 թ. 4/10, Որ. և Կարգ. Ժող., № 12, հոդ. 209):

ՀՈԴ. 345-ա

345-րդ հոդվածի յերրորդ մասում նշված պահանջները ընդ-

հանուր կարգով բավարարելը հետագայում չի ազատում լիկվիդատորներին 342-րդ հոդվածի համաձայն այդ պահանջները քննելու և բավարարված անձերից ու մնանկ պարտապանից (յեթե նա այդ պահանջները կամովին չի բավարարել) պահանջները հիմնավորող ապացույց պահանջելու պարտականությունից:

Յեթե այդպիսի քննությամբ պարզվի, վոր այդ պահանջներն ըստ իրենց բնույթի ընդհանուր կարգով բավարարման յենթակա չելին, և յեթե մնացած գույքը չի բավականացնում պարտատերի պահանջները բավարարելու համար, ապա լիկվիդատորները պարտավոր են՝

ա) պատշաճ գատարանում հայց հարսուցել լուծարքի յենթարկելով գույքից ստացած գումարը ապուինի կարգով բավարարված պարտատերից հետ պահանջելու մասին;

բ) Յեթե պարտատերը կամ սնանկ պարտապանը խաբեբայություն է գործադրել, ապա համապատասխան անձանց դեմ բացի քաղաքացիական հայցից քրեական հետապնդում հարուցել:

(1930 թ. 4/10, Որ. և Կարգ. Ժող., № 12, հոդ. 210):



ՀՀ Ազգային գրադարան


NL0957717

15 APR. 1936

293

II
29081